ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ • ՓՈՐՁ • ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ներկայումս տնտեսագետների և մասնավորապես՝ մակրոտնտեսագետների նկատմամբ աշխատանքի ներքին և միջազգային շուկաներում առկա է մեծ պահանջարկ: Այս կրթական ծրագրի շրջանավարտները պահանջված են ինչպես պետական կառավարման մարմիններում, այնպես էլ մասնավոր հատվածի ընկերություններում, ֆինանսական համակարգում՝ Կենտրոնական բանկում և առևտրային բանկերում, հետազոտական կենտրոններում և միջազգային կազմակերպություններում: Ծրագրում ներառված ուսանողների մեծ մասն արդեն առաջին կուրսում սկսում են աշխատել մասնագիտական ոլորտում՝ բարձր աշխատավարձով:

Ծրագրի տևողությունը

1.5 տարի

Դասապրոցեսը

շաբաթական 3 անգամ
ժամը 18.20-ից

Ուսման վճարը (տարեկան)

700.000 ՀՀ դրամ

Որակավորում

տնտեսագիտության մագիստրոս

ԱՌԱՐԿԱՅԱՑԱՆԿ

Առարկայացանկը մշակվել է ՀՀ պետական կառավարման մարմինների և մասնավոր հատվածի ընկերությունների հետ համատեղ՝ հաշվի առնելով միջազգային առաջատար համալսարանների փորձը:

առաջին կիսամյակ

1. Գիտական հետազոտության մեթոդաբանություն
2. Ֆինանսական ածանցյալների շուկաներ
3. Ինովացիոն տնտեսություն
4. Ներդրումային քաղաքականություն
5. Արժութային քաղաքականություն
6. Տնտեսական անվտանգության մոդելներ
7. Էկոնոմետրիկական մոդելավորում

երկրորդ կիսամյակ

1. Մակրոտնտեսական քաղաքականության հիմնախնդիրներ
2. Ֆինանսական ծրագրավորում
3. Տնտեսական աճի մոդելներ
4. Ոլորտային քաղաքականություն
5. Հարկային քաղաքականության մոդելներ
6. Տարածական զարգացում
7. Մակրոտնտեսական կանխատեսում

երրորդ կիսամյակ

1. Գիտահետազոտական փորձառություն (տևողություն՝ 10 շաբաթ)
2. Մագիստրոսական թեզի պաշտպանություն



ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄ

Կարեն Համլետի Գրիգորյան

Կրթական ծրագրի ղեկավար

LinkedIn հարթակում անձնական էջի **հղումը**

Մակրոէկոնոմիկայի ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ, 2007-2011 թթ.՝ ՀՊՏՀ կրթական բարեփոխումների և միջազգային կապերի վարչության պետ, 2018-2021 թթ.՝ ՀՀ Գիտության կոմիտեի հետազոտական խմբի գիտական ղեկավար, 2015-2017 թթ.՝ Եվրոպական միության Տեմպուսի «Վերիտաս» ծրագրի ՀՊՏՀ համակարգող, 2013 թ.՝ ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի հետազոտական խմբի ղեկավար, 2014-2016 թթ.՝ ՀՀ Որակի ապահովման ազգային կենտրոնի փորձագետ, 2006, 2007, 2013 թ.՝ Գերմանիայի Ռուր և Տրիրի համալսարաններ, հետազոտող գիտնական (DAAD), 2011 թ.՝ Բուլղարիայի Ռուսեի համալսարան, ԵՄ «Էրազմուս պլյուս» ծրագիր, հետազոտող, 2009 թ.՝ ԱՄՆ պետդեպարտամենտի «Ֆուլբրայթի» գիտական ծրագիր, հետազոտող, ԱՄՆ Ֆլորիդայի պետհամալսարան, 2005 թ.՝ ԱՄՆ պետդեպարտամենտի Ամերիկանագիտության ծրագիր, ԱՄՆ, հրավիրյալ դասախոս: Վերապատրաստումներ՝ 2020 թ.՝ Ավստրիա, 2019 թ.՝ Ֆրանսիա, 2015 թ.՝ Շվեդիա, Մեծ Բրիտանիա, Իսպանիա, 2003-2006 թթ.՝ Սանկտ Պետերբուրգի Եվրոպական համալսարան, «Կիրառական մակրոտնտեսագիտություն դասավանդելու գերազանցության համար» ծրագիր:

Թաթուլ Մելսիկի Մկրտչյան

ՀՊՏՀ գիտության գծով պրոռեկտոր, տ.գ.դ., դոցենտ, 2011-2019 թթ. ՀՊՏՀ մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետի դեկան, 2000-2001 թթ.՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության առևտրի և ծառայությունների բաժնի առաջին կարգի մասնագետ: Բազմաթիվ վերապատրաստումների, միջազգային գիտաժողովների և աշխատաժողովների մասնակցություն Բելգիայում, Գերմանիայում, Մոլդովայում, Ռուսաստանում, Ուկրաինայում և այլ երկրներում:

ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄ

Ծովինար Ջիվանի Կարապետյան

LinkedIn հարթակում անձնական էջի **հղումը**

Տ.գ.թ., դոցենտ: 1974թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետը: Նույն թվականից աշխատում է ամբիոնում:Վարում է դասընթացներ մագիստրատուրայում, իրականացնում է ակտիվ գիտաուսումնական և գիտահետազոտական գործունեություն: Մասնակցել է միջազգային գիտաժողովների, սեմինարների, համաժողովների, որակավորման բարձրացման ծրագրերի: Հիմնել և ղեկավարում է «Նորամուծություն և կրթություն» ՀԿ-ն: Ղեկավարում կամ մասնակցում է տարբեր գիտահետազոտական ծրագրերի:

Քնարիկ Ջոնիկի Վարդանյան

Տ.գ.թ. դոցենտ: Դասավանդող դասընթացներն են՝Մակրոէկոնոմիկա, Մակրոտնտեսական քաղաքականության հիմնախնդիրներ, Մակրոտնտեսական հավասարակշռության ապահովում, Դրամավարկային քաղաքականություն: Վերապատրաստվել է մի շարք մասնագիտական վերապատրաստման ծրագրերով, ՀՀ ԳՊԿ և ՀՊՏՀ Ամբերդ հետազոտական կենտրոնի գիտահետազոտական թեմաներով ձևավորված հետազոտական խմբերի գիտաշխատող է:

Ռուբեն Սուրենի Ղանթարչյան

Տ.գ.թ., դոցենտ: 2019թ. ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի «ՀՀ Շիրակի մարզի սոցիալ-տնտեսական մոդելի մշակում» թեմայով գիտահետազոտական խմբի փորձագետ: 2021թ. ՄԱԿ հայկական գրասենյակի, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի պատվիրած «ՀՀ ժողովրդագրական հիմնախնդիրները պատերազմի և համավարակի հետևանքների գնահատման համատեքստում» թեմայով գիտահետազոտական թեմայով հետազոտական խմբի փորձագետ:

Գարիկ Արմենակի Պետրոսյան

LinkedIn հարթակում անձնական էջի **հղումը**

ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄ

Տ.գ.թ., դասախոս: ՀՀ ֆինանսների նախարարության Մակրոտնտեսական քաղաքականության վարչության Հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների կոորդինացման բաժնի պետ: Մասնակցել է մակրոտնտեսական քաղաքականության և կանխատեսման վերաբերյալ մի շարք մասնագիտական վերապատրաստումների ԱՄՆ-ում, Ավստրիայում, Լեհաստանում և այլ երկրներում: Հետազոտություններ է կատարել ՀՀ գիտության կոմիտեի, Ամբերդ հետազոտական կենտրոնի դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում: Ավելի քան 20 գիտական հոդվածների հեղինակ է:

Գայանե Արամի Ավագյան

LinkedIn հարթակում անձնական էջի **հղումը**

Տ.գ.թ, դոցենտ: Մասնակցել է որակավորման բարձրացման դասընթացների, 2006-2009 թթ. գիտաշխատող ՀՀ ԿԲ «ՀՀ-ում գործող բանկերի կողմից մատուցվող ծառայությունների պահանջարկի ուսումնասիրություն», 2012-13 թթ. «Երևան քաղաքի և ՀՀ մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրները», 2012-2021 թթ. ՀՀ ԳԿ ծրագրի «Ամբողջական պահանջարկի կառուցվածքային տեղաշարժերի վերլուծությունն ու կանխատեսումը ՀՀ-ում», «ՀՀ մակրոտնտեսական իրավիճակը և հեռանկարները», «ՀՀ տնտեսության իրական և ֆինանսական հատվածների արդյունավետ փոխգործակցության հնարավորությունները», «Պետական փոխառու միջոցների ներգրավման միջոցով տնտեսական զարգացում ապահովելու հնարավորությունները ՀՀ-ում» թեմաներով հետազոտական խմբերում, 2021 թ. ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի «ՀՀ արդյունաբերության մրցունակության բարձրացման հնարավորությունները» թեմայով հետազոտական խմբի ղեկավար:

ԳՈՐԾԸՆԿԵՐ-ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
- ՀՀ ֆինանսների նախարարություն
- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
- ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
- ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն
- ՀՀ Կենտրոնական բանկ
- ՀՀ առևտրային բանկեր
- ՀՀ պետական եկամուտների կոմիտե
- ՀՀ վիճակագրական կոմիտե
- ՀՀ մրցակցության պաշտպանության հանձնաժողով
- ՀՀ հանրային ծառայությունների կարգավորման պետական հանձնաժողովների,
- ՀՀ մարզպետարաններ
- ՀՀ համայնքապետարաններ
- Արժույթի միջազգային հիմնադրամ
- Համաշխարհային բանկ
- Միավորված ազգերի կազմակերպություն
- ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալություն
- Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ
- Եվրասիական զարգացման բանկ
- Ասիական զարգացման բանկ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ծրագրի շրջանավարտները, համապատասխան վերջնարդյունքներ ստանալով, կարող են զբաղեցնել տնտեսագետի, մակրոտնտեսագետ-վերլուծաբանի, մակրոտնտեսագետ փորձագետի, տնտեսագետ-հետազոտողի, տնտեսագետ էկոնոմետրիստի, մասնագետի և այլ պաշտոններ տնտեսության պետական և մասնավոր հատվածներում, ինչպես նաև հանրային ծառայության ղեկավար և մասնագիտական պաշտոններ, համայնքային ծառայության, մաքսային ծառայության և հարկային ծառայության պաշտոններ: Պաշտոններ ֆինանսական համակարգում, բանկերում, գործարար հատվածի ընկերություններում, արտաքին հատվածում, գիտության և հետազոտությունների ոլորտում և ՀԿ-երում:

Ծրագրի շրջանավարտների նկատմամբ պահանջարկն առկա է միջազգային տնտեսական կազմակերպություններում, մասնավորապես՝Արժույթի միջազգային հիմնադրամի, Համաշխարհային բանկի, Միավորված ազգերի կազմակերպության և նրա տարբեր հիմնադրամների, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի, Միջազգային ֆինանսական կորպորացիայի, Եվրասիական զարգացման բանկի, Ասիական զարգացման բանկի և այլ միջազգային կազմակերպությունների ներկայացուցչություններում:

շրջանավարտներ

Ողջույն, **ես Անին եմ:** Ավարտել եմ ՀՊՏՀ տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետի մակրոէկոնոմիկայի ամբիոնի մագիստրատուրայի կրթական ծրագիրը, որից հետո սովորել եմ մակրոէկոնոմիկայի ամբիոնի ասպիրանտուրայում

Այժմ աշխատում եմ **ՀՀ ֆինանսների նախարարությունում որպես խորհրդական**, **ինչպես նաև դասավանդում եմ իմ սիրելի բուհում:** Մասնագիտական աշխատանքի փորձ ունեմ նաև ՀՀ վարչապետի աշխատակազմում, ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում, մի շարք այլ նախագծերում և հետազոտական խմբերում: Ուսումնառության ընթացքում բարձրորակ դասախոսների կողմից փոխանցած գիտելիքներն ու կարողություններն ինձ տվել են ամենակարևորը՝ տնտեսությունը համակողմանի և խորքային պատկերացնելու հնարավորություն: Մակրոտնտեսական վերլուծության բնագավառի հիմնարար գիտելիքներս ու հմտություններս աշխատանքում կիրառում եմ միշտ՝ թե՛ ծրագրերի մշակման, թե՛ հետազոտությունների իրականացման և թե՛ ամենօրյա որոշումների կայացման ընթացքում:

Ողջո՛ւյն, **ես Կամոն եմ**: Ավարտել եմ ՀՊՏՀ տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետի «Մակրոտնտեսական վերլուծություն» կրթական ծրագրի առկա մագիստրատուրան:

Այժմ աշխատում եմ **ՀՀ կրթության**, **գիտության**, **մշակույթի և սպորտի նախարարությունում՝ որպես նախարարության գլխավոր քարտուղարի ֆինանսական և գնումների հարցերով օգնական**: Ուսումնառության ընթացքում ձեռք եմ բերել մի շարք տեսական և գործնական գիտելիքներ, որոնք այսօր աշխատանքային գործունեությանս ամուր հիմքն են: Մագիստրոսական այս կրթական ծրագիրը եզակի է ամբողջ հանրապետությունում և հնարավորություններ է տալիս բացահայտելու տնտեսական քաղաքականության տարբեր ուղղություններ և բնագավառներ, բազմակողմանիորեն ուսումնասիրելու տնտեսությունում տեղի ունեցող երևույթները, հաջողությամբ աշխատելու պետական և մասնավոր ոլորտներում:

շրջանավարտներ

Ողջո՛ւյն, **ես Լուսինեն եմ:** Ավարտել եմ ՀՊՏՀ տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետի մակրոէկոնոմիկայի ամբիոնի մագիստրատուրայի կրթական ծրագիրը:

Մագիստրատուրայում ուսանելու տարիներին ուսումը մեկտեղել եմ աշխատանքի հետ՝ աշխատելով ՀՀ խոշոր բանկերից մեկում՝ որպես տնտեսագետ և ռիսկերի կառավարման մասնագետ: Մակրոտնտեսական վերլուծության ոլորտի այս մագիստրոսական ծրագրով ձեռք բերած ժամանակակից գիտելիքների, հմտությունների, որակյալ դասախոսական կազմի փոխանցած փորձի և նաև ՀՊՏՀ՝ որպես մեծ ընտանիքի, մարդկային միջավայրի շնորհիվ դարձել եմ մրցունակ աշխատանքի շուկայում, հաջողել եմ բիզնես միջավայրում և այսօր, արդեն, **ղեկավարում եմ տարբեր միջազգային ընկերությունների (ՄԱԿ, ՎԶԵԲ) գործընկեր հանդիսացող ընկերություն**: